

6/ 2089



ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝  
Շրջակա միջավայրի նախարար  
Հակոբ Սիմիոյան  
«24» 02 2025թ.

## ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱԿԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 041 - 25

Նախաձեռնող՝

«ԲԼՅՈՒ ՍԹՈՆ» ՍՊԸ  
ք. Երևան, Էրեբունի, Խորենացի փ., 221/36 փ.

Գործունեությունը՝

Նորագյուղի անդեզիփաբազալիների հանքավայրի  
հարակից (հյուսիսային) տեղամասում  
երկրաբանահետախուզական աշխատանքներ  
Կոփայքի մարզ

Առդիր՝ 7 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ  
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 041 - 25

«24» փետրվարի 2025թ.

**Նորագյուղի անդեզիտաբազալտների հանքավայրի հարակից  
(հյուսիսային) տեղամասում երկրաբանահետախուզական  
աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության  
գնահատման հաշվետվություն**

Նախաձեռնող՝	«ԲԼՅՈՒ ՍԹՈՆ» ՍՊԸ
Փաստաթղթի տեսակը՝	Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն
Գործունեության տեսակը՝	«Բ» կատեգորիա
Տեղադրման վայրը՝	Կոտայքի մարզ, Նաիրի համայնք Զորավան բնակավայր

**Ներածական մաս.** Կոտայքի մարզի Նորագյուղի անդեզիտաբազալտների հանքավայրի հյուսիսային տեղամասում «ԲԼՅՈՒ ՍԹՈՆ» ՍՊԸ-ի կողմից նախատեսվում է իրականացնել երկրաբանահետախուզական աշխատանքներ:

Համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի՝ 12-րդ հոդվածի 4-րդ մասի 2)-րդ կետի ա. ենթակետի՝ նախատեսվող գործունեությունը հանդիսանում է «Բ» կատեգորիայի գործունեության տեսակ:

Երկրաբանահետախուզական աշխատանքների նպատակն է տեղամասում արդյունաբերական նշանակություն մարմինների հայտնաբերումը, դրանց տեղադիրքի, ֆիզիկա-մեխանիկական ու նյութական կազմի բնութագրումը և արդյունքների հիման վրա երկրաբանական հաշվետվության աշխատանքների կազմումը:

**Նկարագրական մաս.** Նորագյուղի անդեզիտաբազալտների հանքավայրի հարակից՝ հյուսիսային տեղամասը գտնվում է Կոտայքի մարզի Նաիրի համայնքի Զորավան բնակավայրի վարչական տարածքում, համանուն բնակավայրից՝ մոտ 3 կմ հարավ-արևելք, Եղվարդ բնակավայրից՝ մոտ 6 կմ դեպի հյուսիս-արևելք, Նոր Գեղից՝ մոտ 1.5-3.0 կմ դեպի հյուսիս-արևմուտք, զբաղեցնում է շուրջ 23,6 հա մակերես:

Տարածքի երկրաբանական կառուցվածքում մասնակցում են վերին միոցենի, վերին պլիոցենի, վերին չորրորդական առաջացումների ապարները և ժամանակակից առաջացումները:



Լեռնագրական տեսակետից հանքավայրի շրջանը զբաղեցնում է Եղվարդի հրաբխային սարավանդը և Արա լեռան հարավային լանջերը: Ուսումնասիրության ենթակա տարածքը գտնվում է 1400-1450 մ բացարձակ բարձրությունների սահմաններում:

Համաձայն գնահատման հաշվետվության՝ նախատեսվող գործունեության տարածքն արդեն իսկ կրում է անտրոպոգեն ազդեցություն, ուսումնասիրվող տարածքում բնական էկոհամակարգերը ներկայումս խիստ փոփոխված և դեգրադացված են, բուսականությունը գրեթե բացակայում է: Ուսումնասիրության և հարակից տարածքներում չկան անտառներ, բացակայում են հազվագյուտ, Կարմիր գրքերում գրանցված բույսերի և կենդանիների տեսակներ, տարածքը անմիջական սահմաններ չունի ԲՀՊՏ-ների հետ:

Ուսումնասիրության ենթակա տարածքի ծայրակետերի կոորդինատները՝ ARMWGS-84 միասնական համակարգով հետևյալն են՝

Y	X	Y	X
1 8462435,0000	4466650,0000	13 8463719,0103	4466923,9239
2 8462385,7459	4466700,4042	14 8463721,3959	4466819,6123
3 8462354,6689	4466887,1903	15 8463450,7880	4466788,0954
4 8462506,6359	4467052,1223	16 8463375,0193	4466751,0959
5 8462781,5622	4467250,1643	17 8463370,5135	4466818,1786
6 8462870,1145	4467211,6704	18 8463130,2578	4466876,3242
7 8462777,9108	4466953,3819	19 8462821,3608	4466899,4010
8 8463156,4685	4466917,0719	20 8462757,2027	4466895,3727
9 8463408,3083	4466847,6957	21 8462714,0195	4466774,4043
10 8463465,8169	4467009,9214	22 8462583,6071	4466708,3509
11 8463501,7006	4466958,3893	1 8462435,0000	4466650,0000
12 8463606,9384	4466931,6321		

Դիտարկվող տարածքը բաժանվում է երկու՝ արևելյան և արևմտյան հատվածների, արևելյան հատվածը բլրածև է, շատ անհարթ, արևմտյան հատվածը՝ համեմատաբար հարթ:

Տարածքում օգտակար հանածոն հանդիսանում է վերին պլիոցենի հասակի անդեզիտաբազալտներ՝ ծածկված մինչև 3-3.5 մ հզորությամբ հեղեղաբերուկ-ողողաբերուկ նստվածքներով՝ ավազակավերով և անդեզիտաբազալտների բեկորներով:

Նորագյուղի անդեզիտաբազալտների հանքավայրի Հյուսիսային տեղամասում հետախուզման մեթոդիկայի ու միջոցների ընտրությունը կատարվել է հաշվի առնելով տեղամասի երկրաբանական կառուցվածքի առանձնահատկությունները և տեղանքի ռելեֆի ձևը:

Տեղամասի հետախուզումը նախատեսվում է իրականացնել երկրաբանական երթուղիների, հետախուզահորերի անցման, մեխանիկական սյունակային հորատանցքերի հորատման, փորձնական բացահանքի անցման և մերկացումների նմուշարկման միջոցով:

Ուսումնասիրվող տարածքի սահմաններում նախատեսվում է կատարել (1:1000 մասշտաբների) որոնողական 20 կմ երթուղիներ՝ տեղամասի երկրաբանական կառուցվածքի և սահմանների ճշտման համար, երկրաբանական քարտեզների կազմման նպատակով տողագրական և երկրաբանական հանույթ՝ բոլոր հետախուզական փորվածքների և նմուշարկման տեղերի, ապարների երկրաբանական սահմանների գործիքային տեղադրմամբ:



Դաշտային չափագրման աշխատանքների ժամանակ կկիրառվեն Leica Nova TS 60 բարձր ճշգրտության տախտմետր Leica Viva GNSS GS14 ընդունիչով և CS15 կառավարման վահանակով գլոբալ տեղորոշման համակարգեր:

Քանի որ ուսումնասիրության տեղամասի որոշ հատվածներում անդեգիտաբազալտների հաստվածքը ծածկված է հողաբուսական շերտով՝ անդեգիտաբազալտների շերտերի տարածումը վերին հողաբուսական և դեյուվիալ շերտերի տակ պարզելու նպատակով նախատեսվում է առավելագույնը 7 հետախուզահորերի անցում՝ յուրաքանչյուրը 4 մ<sup>2</sup> մակերեսով՝ մինչև 3 մ խորությամբ, ընդամենը՝ 28 մ<sup>2</sup> մակերեսով, 84 մ<sup>3</sup> ծավալով: Նախատեսված հետախուզահորերից ընդհանուր թվով կվերցվեն 7 փորձանմուշներ ակոսային նմուշարկման միջոցով, 5x10 սմ հատույթով՝ յուրաքանչյուրը մինչև 2 մ երկարությամբ:

Հետախուզահորերի բացումը կհականացվի էքսկավատորի միջոցով:

Ուսումնասիրությունների տեղամասի այն հատվածներում, որտեղ անդեգիտաբազալտների շերտը մերկանում է երկրի մակերևույթին նախատեսվում են թվով 5 մերկացումների փաստագրում և նմուշարկում: Բնական մերկացումներից նմուշարկումը կիրականացվի ակոսային նմուշարկման եղանակով, որի արդյունքում կվերցվի մինչև 5 մ երկարությամբ՝ 5 նմուշներ:

Ընդհանուր լեռնային փորվածքներից և բնական մերկացումներից կվերցվեն 12 նմուշներ՝ ակոսային նմուշարկման եղանակով (7 նմուշներ հետախուզահորերից, 5 նմուշներ բնական մերկացումներից):

Հաշվի առնելով ուսումնասիրության տեղամասի ռելիեֆը, հորատման կետերը կտեղադրվեն հնարավորինս մեղմաթեք տեղանքներում, նախատեսվում է իրականացնել 5x8 մ չափսերով մինչև 10-12 հորատման հարթակ, յուրաքանչյուր հորատահրապարակի մակերեսը նախատեսվում է 40 մ<sup>2</sup>, ընդհանուր հորատահրապարակների մակերեսը՝ 480 մ<sup>2</sup>: Կհորատվեն թվով 10-12 հորատանցքեր՝ 30 մ միջին խորությամբ: Դեպի հորատման հրապարակներ հորատող հաստոցի մոտեցումը կկատարվի օգտագործելով գոյություն ունեցող լեռնային ճանապարհները: Հորատումը կիրականացվի ուղղաձիգ՝ ժամանակակից եռսյունակային և երկսյունակային հորատման սարքերով (Atlas Copco CS կամ նմանատիպ հորատող մեքենա), միայն PQ (122.6մմ) տրամագծով, որի դեպքում կստացվեն 85.0 մմ տրամագծերով հորատահանուկներ:

Հորատման անհրաժեշտ տեխնիկական ջուրը բերվելու է ավտոցիստեռնով՝ պահեստավորվելու է համապատասխան տարաներում և օգտագործվելու է շրջանառու եղանակով: Օգտակար հանածո համարվող անդեգիտաբազալտների շերտերում հորատահանուկի ելքը պետք է լինի 95%-ից ոչ պակաս: Հորատման աշխատանքների ավարտից հետո բոլոր հորատանցքերը կնշագրվեն և կփակվեն: Հորատման աշխատանքների արդյունավետ իրականացման համար և բնապահպանական նկատառումներից ելնելով կիրառվելու է հորատման լուծույթի օգտագործման փակ շղթա:

Նախատեսվում է ստուգել հորատահանուկի հիմնական ցուցանիշները՝ համեմատելով այն երկրաբանական կտրվածքի հետ, իրականացվելու է հորատահանուկի առաջնային փաստագրում և երկրաբանատեխնիկական նկարագրություն: Ընդհանուր առմամբ՝ նախատեսվում է ամբողջ հորատահանուկը նմուշարկել 72 նմուշներով:

Տեղամասում բազալտի օգտակար հաստվածքից բլոկների ելքը որոշելու համար նախատեսվում է անցնել փորձնական 5x5x6 մ չափերով բացահանքի, փորձնական բացահանքից նախատեսվում է արդյունահանել 150 մ<sup>3</sup> բազալտ արդ թվում 100 մ<sup>3</sup> թարմ և 50 մ<sup>3</sup> վերին շերտի խիստ ճեղքավորված հատվածներից, որը կուսումնասիրվի որպես



շինարարական խճի արտադրության հումք: Փորձնական հանույթը կիրականացվի էքսկավատորով, իսկ դրա անհնարինության դեպքում՝ հորատասեպային եղանակով՝ առանց պայթեցման աշխատանքների: Թարմ բլոկներից երեսապատման սալիկների ելքը որոշելու համար նախատեսվում է փորձնական սղոցման ենթարկել մինչև 5.0 մ<sup>3</sup> ընդհանուր ծավալով կոպտամշակված տարբեր կարգերի բլոկներ:

Ըստ գնահատման հաշվետվության ընդհանուր 84 շարքային /4 կրկնօրինակ փորձանմուշներ/ նմուշներ կենթարկվեն ֆիզիկամեխանիկական հատկությունների ուսումնասիրության: Ստացված նմուշները կենթարկվեն լաբորատոր հետազոտությունների՝ ֆիզիկամեխանիկական, ամրության սահմանը և իրական խտությունը որոշելու համար (ընդհանուր 88 նմուշ):

Նախատեսվում է օգտակար հաստվածքի տարբեր խորություններից վերցված 3 նմուշները ենթարկել քիմիական անալիզի, իսկ բազալտի միներալային կազմը, կառուցվածքը և փոփոխության աստիճանը որոշելու նպատակով պետրոգրաֆիական ուսումնասիրության կենթարկվի 2 հղուկ:

Հյուսիսային տեղամասի երկրաբանական ուսումնասիրությունների ընթացքում, բնատեսուրսներից օգտագործվում է միայն ջուր՝ սպասարկող անձնակազմին խմելու ջրով ապահովելու, կենցաղային կարիքների, ինչպես նաև՝ փոշենստեցման նպատակով, փորվածքները և ավտոճանապարհները ջրելու համար: Խմելու ջուրը կմատակարարվի շշացված տարբերակով, որը կգնվի մոտակա խանութների, իսկ տեխնիկական ջուրը՝ ջրցան ցիստեռներով:

Երկրաբանահետախուզական աշխատանքների իրականացման ընթացքում շրջակա միջավայրի բաղադրիչների (հողային, ջրային ռեսուրսներ, մթնոլորտային օդ, կենսաբազմազանություն) վրա հնարավոր են որոշակի ազդեցություններ, որոնցից են՝ երկրաբանահետախուզական աշխատանքների իրականացման ընթացքում կիրառվող ավտոտրանսպորտի և սարքավորումների աշխատանքից մթնոլորտային օդ վնասակար գազերի և փոշու արտանետումները: Փոշու արտանետումներ կառաջանան նաև հորատման հրապարակների շինարարության, առուների և հետախուզահորերի անցման, ճանապարհների վերանորոգման և կառուցման, ինչպես նաև աշխատանքները սպասարկող ավտոտրանսպորտի տեղաշարժման ժամանակ: Համաձայն գնահատման հաշվետվության՝ ուսումնասիրության տարածքում վնասակար գազերի (ազոտի օքսիդ, ածխածնի օքսիդ, մուր) առավելագույն կոնցենտրացիաները չեն գերազանցելու նորմատիվային փաստաթղթերով ամրագրված սահմանային թույլատրելի խտությունները:

Ուսումնասիրության տարածքում հողային ծածկույթի վրա դրսևորվող բացասական ազդեցությունները կապված կլինեն մակերեսային լեռնային փորվածքների անցման, հորատման հրապարակների և ճանապարհների կառուցման հետ: Հաշվի առնելով, որ տարածքում հողի բերրի շերտի միջին հզորությունը կազմում է 0,15-0,2 մ, փորվածքների անցման և հորահրապարակի կառուցման ժամանակ բերրի շերտը հանվելու և կուտակվելու է անմիջապես աշխատանքի վայրի հարևանությամբ:

Աշխատանքների ժամանակ հնարավոր առաջացող թափոնները կհանդիսանան օգտագործված, բանեցված քայուղերը, նավթամթերքի մնացորդները, հորատման թափիկները, կենցաղային թափոնները, հեռացվող հողաբուսական շերտը: Առաջացող թափոնների բնութագրերի, վտանգավարության դասի, քանակների վերաբերյալ տեղեկատվությունն առավել մանրամասն նկարագրված է գնահատման հաշվետվությունում, թափոնների կառավարման պլանում:



Շրջակա միջավայրի բաղադրիչների վրա վնասակար ազդեցության մեղմացման/վերացման նպատակով նախատեսվում են հետևյալ բնապահպանական միջոցառումները.

1. Նավթամթերքների նվազագույն անհրաժեշտ քանակի պահեստավորում անթափանց տակառներով աշխատանքները սպասարկող բեռնատար մեքենայի թափքում: Վառելիքի հիմնական լիցքավորման և քսայուղերի փոխարինման աշխատանքների կատարում մոտակա բնակավայրում:

2. Օգտագործված յուղերի ու քսայուղերի հավաքում առանձին տարրաների մեջ՝ հետագա ուտիլիզացման կամ երկրորդական վերամշակման համար:

3. Հնամաշ դետալների ու մասերի հավաքում և հանձնում որպես մետաղական ջարդոն վերամշակող ընկերությանը՝ պայմանագրային հիմունքներով:

4. Մեքենաների, հորատման հաստոցի, այլ սարքավորումների շահագործում տեխնիկական սարքին վիճակում:

5. Փոշենստեցման նպատակով ճանապարհների ջրում տարվա չոր և շոգ եղանակներին: Հորատահրապարակների ջրցանման ծավալների այնպիսի հաշվարկ, որ կբավարարի փոշու նստեցմանը և չի առաջացնի արտահոսք և այլն:

Հորատման հրապարակների շինարարության ժամանակ հողի բերրի շերտի հեռացումն ու կառավարումը կիրականացվի Կառավարության 2017թ. փետրվարի 11-ի N1404-Ն որոշման պահանջներին համապատասխան:

Համաձայն գնահատման հաշվետվության նախատեսվում են նաև մի շարք բնապահպանական միջոցառումներ, որոնք ուղղված են աշխատանքների ժամանակ հնարավոր առաջացող աղմուկի և թթոունների վերահսկողությանը, տարածքում արտակարգ իրավիճակների առաջացմանը, նախատեսվող բնապահպանական միջոցառումներն առավել մանրամասն նկարագրված են գնահատման հաշվետվության համապատասխան բաժիններում:

Երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների ընթացքում ընկերությունը իրականացնելու է շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելմանն և մեղմացմանն ուղղված հետևյալ մշտադիտարկումները.

1. մթնոլորտային օդն աղտոտող նյութերի արտանետումների որակական և քանակական պարամետրերի պարբերական չափումներ՝ հունիս-սեպտեմբեր ամիսներին (շոգ և քիչ տեղումներով եղանակին)՝ յուրաքանչյուր շաբաթը մեկ անգամ:

2. Լեռնատրանսպորտային սարքավորումների աշխատանքային վիճակի՝ մասնավորապես չեզոքացուցիչ սարքավորումների սարքին վիճակի պարբերական մշտադիտարկումներ, տարին մեկ անգամ հաճախականությամբ:

3. Օգտագործված մեքենայական յուղերով ու քսայուղերով հողերի հնարավոր աղտոտումից խուսափելու նպատակով հողերի աղտոտվածության մշտադիտարկումներ՝ աշխատանքների իրականացման վայրում:

4. Կենսաբազմազանության ուսումնասիրություն, տարածքին բնորոշ վայրի բնության ներկայացուցիչների քանակի, աճելավայրերի և ապրելավայրերի տարածքի, պոպուլյացիայի փոփոխությունների դիտարկում ուսումնասիրության ենթակա և հարակից տարածքներում:

Շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելմանն ու մեղմացմանն ուղղված մշտադիտարկումների և բնապահպանական միջոցառումների իրականացման համար նախատեսվում է 5 000 000 ՀՀ դրամ:



Հողի վերին շերտի պահպանության նպատակով նախատեսվում է հորատահրապարակների, հետախուզահորերի բացման և ճանապարհների կառուցման ժամանակ հանել և պահեստավորել հողի վերին շերտը (հողաշերտերը կպահվեն յուրաքանչյուր բացված հորատահրապարակի անմիջապես հարևանությամբ, և բացված ճանապարհների երկայնքով): Յուրաքանչյուր պատրաստված հորատահրապարակում, հորատման աշխատանքների ավարտից անմիջապես հետո՝ բացված լանդշաֆտները կվերականգնվեն պահեստավորված հողաշերտերով ծածկելու միջոցով: Դաշտային աշխատանքների ավարտից հետո պահեստավորված հողաշերտով կվերականգնվի նաև բացված ճանապարհների լանդշաֆտը: Ռեկուլտիվացման աշխատանքները կիրականացվեն ձեռքով: Վերականգնման ենթակա հողաշերտի ծավալը կկազմի 5,6 մ<sup>3</sup>:

Ռեկուլտիվացիայի աշխատանքների արժեքը կկազմի 1677966.36 ՀՀ դրամ:

**Պարճառաքանական մաս.** օրենսդրությամբ սահմանված կարգով շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության փորձաքննության փուլերում Կոտայքի մարզի Զորավան բնակավայրում անցկացված հանրային լուսմների ժամանակ գործունեության իրականացումը մասնակիցների կողմից արժանացել է հավանության:

Գնահատման հաշվետվության վերաբերյալ փորձաքննական գործընթացում ստացվել են կարծիքներներ ներքին գործերի, առողջապահության, կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություններից, կադաստրի կոմիտեից, Կոտայքի մարզպետարանից, ինչպես նաև շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումներից: Ստացված դիտողությունները և առաջարկությունները հաշվի են առնվել հայտի լրամշակման մեջ:

Ամփոփելով հաշվետվության բնապահպանական և սոցիալական ազդեցությունների վերլուծությունները՝ կարելի է եզրահանգել որ, շրջակա միջավայրի վրա հնարավոր բացասական ազդեցությունները, որոնք կառաջանան նախատեսվող գործունեության աշխատանքների իրականացման արդյունքում, կկրեն ժամանակավոր և տեղայնացված բնույթ և կլինեն թույլատրելի նորմայի սահմաններում: Դրանք կարող են բացառվել կամ մեղմվել գործունեության ընթացքում բնապահպանական միջոցառումների արդյունավետ իրականացմամբ:

### Փորձաքննական պահանջներ

1. Երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների իրականացման ընթացքում, անհրաժեշտ է խստագույնս հետևել գնահատման հաշվետվությունում ամրագրված բնապահպանական միջոցառումների իրականացմանը, իսկ դրանց չբավարարման դեպքում նախատեսել լրացուցիչ միջոցառումներ՝ ապահովելով բնապահպանական բոլոր նորմերը:
2. Անհրաժեշտ է երկրաբանահետախուզական և ցանկացած տիպի հողային աշխատանքներն իրականացնել հնագետի հսկողությամբ և ցուցումներով, ուսումնասիրության ընթացքում ազդեցության չենթարկել նոր հայտնաբերված հնագիտական միավորները, պահպանել դրանց ամբողջականությունը և անխաթարությունը: Աշխատանքների իրականացման ընթացքում անհրաժեշտ է առաջնորդվել ՀՀ կառավարության 2002 թվականի ապրիլի 20-ի N 438 որոշման 43-րդ կետի պահանջով՝ աշխատանքների կատարման ժամանակ պատմական, գիտական, գեղարվեստական և այլ մշակութային արժեք ունեցող հնագիտական և մյուս օբյեկտների հայտնաբերման պահից դադարեցնել աշխատանքները և դրա մասին անհապաղ հայտնել լիազորված մարմնին:
3. Երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների ընթացքում անհրաժեշտ է առաջնորդվել Կառավարության 2018 թվականի փետրվարի 22-ի N 191-Ն որոշման



պահանջներով՝ իրականացնելով գնահատման հաշվետվությամբ ամրագրված շրջակա միջավայրի բաղադրիչների՝ հողի, օդի, կենսաբազմազանության մշտադիտարկումներ, արդյունքները ներառել մոնիթորինգի պլաններում:

4. Անհրաժեշտ է պահպանել առողջապահության նախարարի 2012 թվականի սեպտեմբերի 19-ի թիվ 15-Ն հրամանով հաստատված սանիտարական կանոնների և նորմերի պահանջները:

5. Ապահովել և պահպանել բնապահպանական և մշտադիտարկումների ծրագրում նախատեսված միջոցառումների իրականացումը, բնապահպանական պահանջների կատարումը:

6. Հաշվի առնելով նախատեսվող երկրաբանահետախուզական աշխատանքների տարածքին պտղատու այգիների և ջերմոցների մոտ գտնվելու հանգամանքը, հետագայում արդյունահանման աշխատանքների համար չի կարող երաշխավորվել դրական եզրակացության տրամադրում:

## ԵԶՐԱՓՈՒԿ ԻՉ ՄԱՍ

«ԲԼՅՈՒ ՍԹՈՆ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված Նորագյուղի անդեզիտաբազալտների հանքավայրի հարակից (հյուսիսային) տեղամասում երկրաբանահետախուզական աշխատանքների կատարման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվությանը տրվում է դրական եզրակացություն՝ վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրեն՝



Խաչիկ Մարտիրոսյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի տեղակալ՝



Հերիքնազ Մկրտչյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի գլխավոր մասնագետ՝



Նելլի Նասիբյան